ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2018թ. N 67-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 26-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*.

1.1. «Ջերմուկի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային հիմնարկը, «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» և «Ջերմուկի համայնքի Կ.Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները լուծարելու և «Սպորտի, երիտասարդության, մշակույթի և տուրիստական-տեղեկատվական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

1.2. «Ջերմուկ համայնքի արվեստի N 2 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			

Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակա		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հոկտեմբերի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2018թ. N 68-Ա

«ՋԵՐՄՈՒԿԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԸ, «ՋԵՐՄՈՒԿԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Կ.Ա.ԱՍՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ «ՍՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 81-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 68-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության, 25-րդ հոդվածի 2-րդ մասի, հաշվի առնելով Ջերմուկի մանկապատանեկան մարզադպրոցում, Կ. Ա.Ասրյանի անվան շախմատի դպրոցում և Երիտասարդական կենտրոնում աշխատանքների նվազ ծավալների հետևանքով դրանց օպտիմալացման նպատակահարմարությունը, որի արդյունքում կխնայվեն ֆինանսական զգալի միջոցներ՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Լուծարել «Ջերմուկի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային հիմնարկը, «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» և «Ջերմուկի համայնքի Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները:

2. Համայնքի ղեկավարին լիազորել հիմնադրի անունից Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով սկսելու լուծարման գործընթացը. ստեղծել լուծարման հանձնաժողով, հաստատել լուծարման միջանկյալ հաշվեկշիռը և լուծարման հաշվեկշիռը:

3. Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 25-ի «Ջերմուկ համայնքում «Սպորտի, երիտասարդության, մշակույթի և տուրիստական-տեղեկատվական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 188-Ա որոշումը՝ համաձայն հավելվածի՝ սահմանելով, որ նոր ՀՈԱԿ-ը իր գործունեությունը իրականացնելու է «Ջերմուկի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային հիմնարկի, «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» և «Ջերմուկի համայնքի Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործառույթներով, գույքով և տեխնիկական միջոցներով:

4. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 3-րդ կետում նշված կազմակերպության կանոնադրությունը և հաստիքացուցակը ավագանու հաջորդ՝ հերթական նիստի ժամանակ ներկայացնել հաստատման:

5. Սույն որոշումն ուժիս մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակա		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-....0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հոկտեմբերի 26
Ջերմուկ

Հավելված

Ջերմուկ համայնքի ավագանու
2018 թվականի հոկտեմբերի 26-ի N 68-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2018թ. N 188-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՍՊՈՐՏԻ,ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի, ի կատարումն Ջերմուկ համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված ոլորտային ծրագրի **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հիմնադրման միջոցով Ջերմուկ համայնքում ստեղծել «Սպորտի, երիտասարդության, մշակույթի և տուրիստական-տեղեկատվական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Սահմանել, որ կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

ա/ Ջերմուկ համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը,

բ/ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով պարապողների առողջության պահպանումը և ամրապնդումը, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորումը

գ/ համայնքում շախմատի զարգացմանն ու մասսայականացմանը նպաստող կրթական, մարզական, կազմակերպչական և այլ բնույթի գործունեության իրականացումը

դ/շախմատի մարզաձևով զբաղվող ինչպես դպրոցական, այնպես էլ չափահաս տարիքի անձանց ինքնադրսևորմանը աջակցելը:

ե/երիտասարդական արդյունավետ և նպատակային ծրագրերի իրականացումը, երիտասարդների հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը, երիտասարդական հասարակական նախաձեռնություններին սատարումն ու հասարակական կազմակերպությունների գործունեությանը աջակցության ցուցաբերումը, ինչպես նաև օժտված երիտասարդների և պատանիների հայտնաբերումը, նրանց տաղանդի բացահայտման և կայացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանն օժանդակումը:

զ/ակումբային բնույթի միջոցառումների կազմակերպումը, գյուղական բնակավայրերում ակումբային մշակույթի զարգացումը

է/ համայնքի՝ որպես զբոսաշրջության կենտրոնի, գրավչությունը բացահայտելը և զբոսաշրջիկների մոտ համայնքի հանդեպ հետաքրքրությունը խթանելը, համայնքի տեսարժան վայրերի, գործող հյուրատների, առողջարանների, առողջարանների գնային համակարգի, կազմակերպվող տուրերի մասին սպառիչ տեղեկատվության հավաքագրումը և ըստ անհրաժեշտության՝ տրամադրումը: :

3.Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել գույք՝ համաձայն հավելվածի:

4. Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջի՝սույն որոշումը ներկայացնել Ջերմուկ համայնքի ավագանու հաստատմանը: :

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն հաստատելու մասին Ջերմուկ համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հոկտեմբերի 25
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ղեկավարի 2018 թ.
հոկտեմբերի 25-ի N 188-Ա որոշման

Գ ՈՒ Յ Ք

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍՊՈՐՏԻ , ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ -ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ

հիմնական միջոցներ

հ/հ	հիմնական միջոցների անվանումը	ձեռք բերման տարեթիվը	քանակ	վերագնահատված արժեքը (դրամ)	Գումարը
1	հեռուստացույց VESTEL 32*201	2013	1	45,000	45,000
2	սպասքի պահարան 190*92*50	2013	3	35,000	105,000
3	սպասքի պահարան 190*92*50	2013	2	35,000	70,000
4	համակարգիչ intel P4-2.0/128 RAM/b	2009	1	50,000	50,000
5	սեղան	2013	6	25,000	150,000
6	սեղան լամինատից 180*90 ուղղանկյուն՝ փայտա	2013	20	25,000	500,000
7	լվացարան մեկ տեղանոց 50*50	2013	2	15,000	30,000
8	գազօջախ 25 սմ տրամագծով	2013	2	35,000	70,000
9	Համակարգիչ Computer and MS Windows XP	2009	1	35,000	35,000
10	մոնիտոր samsung 740 NW	2009	1	15,000	15,000
11	տպիչ phaser 3160	2011	1	5,000	5,000
12	Համակարգիչ - P3/256MB/CD RO</et card	2003	1	25,000	25,000
13	համակարգիչ նվիրատվություն անհատույց	2017	2	80,000	160,000
14	գրքապահարան	2008	1	25,000	25,000
15	տնօրենի համար գրասեղան երեք կտորանի	2008	1	35,000	35,000
16	փափուկ կահույք	2008	1	45,000	45,000
17	Համկարգիչ (ԿՈՄՊԼԵԿՏ)	2017	2	65,000	130,000
18	սառնարան	2010	1	65,000	65,000
19	փափուկ կահույք	2010	1	25,000	25,000
20	Էլ. տաքացուցիչ	2010	1	15,000	15,000
21	Համակարգիչ	2010	1	30,000	30,000
22	բռնցքամարտի բարձիկներ	1988	2	500	1,000
23	բռնցքամարտի տոպրակ	1988	2	500	1,000
24	դրենաժ	1988	6	25,000	150,000
25	երկաթյա պոլկաներ	1988	2	3,000	6,000
26	ծանրաձող	1988	1	45,000	45,000
27	գորգ	1988	1	2,000	2,000
28	բռնցքամարտի ռինգ	1988	1	2,000	2,000
29	բռնցքամարտի տանգիկ	2017	4	15,000	60,000
30	բռցքամարտի գորգ	2017	1	15,000	15,000
31	շենքի բացվածք	1988	1	0	19100000

արագամաշ առարկաներ

հ/հ	արագամաշ առարկայի անվանումը	ձեռք բերման տարեթիվը	քանակ	վերագնահատված արժեքը (դրամ)	Գումարը
1	ծանրածող	1988	1	15,000	15,000
2	գրասեղան մեկ տումբանի	1988	1	2,000	2,000
3	ծանրածող	1988	1	8,000	8,000
4	սեղան	1988	1	500	500
5	գրքապահարան	1988	1	500	500
6	սեղան երկու տումբանի	1988	2	500	1,000
7	հեռախոս	1988	1	100	100
8	էլեկտրական տաքացուցիչ	2014	2	15,000	30,000
9	բռնցքամարտի ձեռնոց	2017	11	1,000	11,000
10	բռնցքամարտի ատամնակապ	2017	10	100	1,000
11	դիմադիր սեղաններ	2008	17	5,000	85,000
12	գրասենյակային աթոռներ	2008	40	3,000	120,000
13	դիմադիր սեղաններ	2010	25	5,000	125,000
14	գրքապահարան	2010	1	15,000	15,000
15	գրասենյակային աթոռներ	2010	44	2,000	88,000
16	վարագույրի ծյուլ	2013	12	100	1,200
17	դեկորատիվ վարագույր	2013	12	200	2,400
18	գովազդային ցուցանակ	2013	1	500	500
19	գովազդ. Ցուցանակի դետալներ	2013	6	100	600
20	աթոռ	2013	30	15,000	450,000
21	կառնիզ	2013	4	200	800
22	աթոռ	2013	120	15000	1,800,000
23	վարագույրի ծյուլ	2013	25	100	2,500
24	դեկորատիվ վարագույր	2013	25	200	5,000
	ԸՆԴԱՄԵՆԸ		**393**		**2,765,100**

Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ՝
Ա. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2018թ. N 69-Ա

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ N 2 ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 22-րդ ենթակետով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. «Ջերմուկի համայնքի արվեստի N 2 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել ֆրանսահայ նշանավոր երգիչ, երգահան, գրող, կինոդերասան և հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի անվամբ՝ «Ջերմուկ համայնքի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակա		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ-0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հոկտեմբերի 26
Ջերմուկ